# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆերիկ համայնք 10.01.2023թ.

2023 թվականի հունվարի 10 -ին ժամը 14:00-ին տեղի ունեցավ Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ղեկավարի 2022թվականի աշխատանքային գործունեության տարեկան հաշվետու ժողովը,որին մասնակցում էին ավագանու 5 անդամները, համայնքի շուրջ 75 բնակիչներ,համայնքի ղեկավարի աշխատակազմը:

:

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքի բնակիչների օրինական շահերը պաշպանելու նպաակով շուրջ 80 անգամ հանդես եմ եկել տարբեր միջնորդություններով ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿԱ մարզերի միավորված ստորաբաժանում, Արմավիրի ՏԶԿ-ում, ոստիկանոյունում, մարզպտարանում և այլ կազմակերպութեուններում:

Կատարել եմ համայնքի շորջ 150 բնակիչների ընդունելություն, քննարկվել է շուրջ 50 դիմում

## *II. Ֆինանսների բնագավառ*

2. Ֆինանսների բնագավառ `Եկամուտ 2022-թվ բյուջեի 2-րդ կիսամյակի ընդթացքում ընդամենը հավաքագրվել է 16240.1 հազար դրամ, որը կազմում է բյուջեի 95.1-%-ը, 2021-թվ նույն ժամանակաշրջանում հավաքագրվել է 17321.9-հազար դրամ: Կամ 2021-թվականին ավել է հավաքագրվել 1081.8-հազար դրամ , սակայն 2022-թվ տարեկան պլանի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ պակաս է հավաքագրվել 4.9-%-ով:

2-րդ կիսամյակում ընդամենը հավաքագրված զուտ եկամուտը կազմում է 3181.4 հազար դրամ , որը կազմում է զուտ եկամուտի 72.6-%-ը, իսկ 2021-թվ նույն ժամանակաշրջանում զուտ եկամուտը կազմել է 2564.6-հազար դրամ գումար, որը կազմել է 42.4-%-ը կամ 2022-թվ-ին ավել է հավաքագրվել 616.8-հազար դրամ , սակայն տարեկան պլանի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ պակաս է հավաքագրվել 27.4-%-ով:

| Տողի NN | Եկամտատեսակները՝ | 2021-թ 2-րդ կիսամյակ 4-են | | | 2022-թ 2-րդ կիսամյակ 4-են | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տարեկան պլան | Փաստացի կատարված | %-ը | Տարեկան պլան | Փաստացի կատարված | %-ը |
| 1 | 2 | 3 | 4 | | 5 | 6 | |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300) այդ թվում՝ | 13000.8 | 17321.9 | 133.2 | 17062.1 | 16240.1 | 95.1 |
| | .ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1140 + տող 1150) | 5443.5 | 2104.7 | 38.6 | 3782.0 | 2377.2 | 62.8 |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից այդ թվում՝1111 + տող 1112 + տող 1113) | 5277.5 | 1879.3 | 35.6 | 3616.0 | 1916.5 | 53 |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 3277.5 | 776.8 | 23.7 | 901.2 | 455.6 | 50.5 |
| 1113 | Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ | 2000.0 | 1102.5 | 55.1 | 2714,8 | 1460.9 | 53.8 |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից այդ թվում՝ | 166.0 | 225.4 | 135.7 | 166,0 | 460.7 | 277 |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 166.0 | 225.4 | 135.7 | 166,0 | 460.7 | 277 |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 6957.3 | 6957.3 | 100 | 7272.1 | 7272.1 | 100 |
| 1251 | ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 6957.3 | 6957.3 | 100 | 7272.1 | 7272.1 | 100 |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 +1331 տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390), այդ թվում՝ այդ թվում՝ | | | | | | |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավ | 600.0 | 459.9 | 75.6 | 600,0 | 804,0 | 134 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1261 | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | . | | | 1320.0 | 1641.6 | 124 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| 1262 | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | 1200.0 | 1265.0 | 105 |
| 1390 | 3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392 + տող 1393) | | 7800.0 | | 3134.0 | 2880.01 | |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | 562.7 | | | 254.0 | | |
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | | 7800.0 | | 2880.0 | 2880.01 | 100 |

3. Ծախսեր՝

| Տող | Բյուջետային ծախսեր | 2021-թ 2-րդ | Կիսամյակ | 4-ն | 2022-թ 2-րդ | կիսամյակ | 4-ն |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տարեկան պլան | Փաստացի կատարված | %-ը | Տարեկան պլան | Փաստացի կատարված | %-ը |
| 1 | 2 | 3 | 4 | | 5 | 6 | |
| I | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ Վարչական բյուջե (տող2100+2111տող2200+տող2300+տող2400+տող2500+տող 2600+ տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100) | 13000.8 | 10744.1 | 82.6 | 20847.0 | 19431.5 | 93.2 |
| 2111 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, տեղական ինքնակառավարում | 10438.1 | 8744.1 | 83.7 | 13443.0 | 12373.7 | 92 |
| 2420 | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն / տող2421+2424տող / որից՝ | 2000.0 | 2000.0 | 100 | 3200.0 | 3187.7 | 99.6 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2424 | Ռոդգում | 2000.0 | 2000.0 | 100 | 3200.0 | 3187.7 | 99.6 |
| 2600 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող2600+2641տող) որից` | | | | 2520.0 | 1199.0 | 47.5 |
| 2641 | Փողոցների լուսավորում | | | | 2520.0 | 1199.0 | 47.5 |
| 2900 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2920+տող2930+տող2940+տող2950+տող2960+տող2970+տող2980) որից` | | | | 5800.0 | 5590.8 | 96.3 |
| 2920 | Միջնակարգ ընդհանուր կրթություն | | | | 5800.0 | 5590.8 | 96.3 |
| 3000 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող3010+տող3020+տող3030+տող3040+տող3050+տող3060+տող3070+3071 տող3080+տող3090) որից`` | 450.0 | 300.0 | 66.6 | 450.0 | 150.0 | 33.3 |
| 3071 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 450.0 | 300.0 | 66.6 | 450.0 | 150.0 | 33.3 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3100 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110+3112տող) Որից` | 562.7 | | | 254.0 | | |
| 3112 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 562.7 | | | 254.0 | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| II | Ֆոնդային Բյուջե՝ (տող5113+5122տող) | | | | 4820.0 | 3069.7 | 63.6 |
| 5113 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | | | | 2520.0 | 1199.0 | 47.5 |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | | | | 2300.0 | 1870.7 | 81.3 |
| | Տարեսկզբի ազատ մնացորդ | 1437.3 | | | | | |
| I+II | ԸՆԴՀԱՄԵՆԸ ՝ ԾԱԽՍ | 14438.1 | 10744.1 | 74.4 | 25413.0 | 22501.2 | 88.5 |

Ֆերիկ համայնքի 2022-թվ-ի 2-րդ կիսամյակի ընթացքում կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը՝

ա/ Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման համար՝ 2-րդ կիսամյակի ընթացքում կատարվել է ծախսեր 12373.7-հազր դրամ, որից աշխատավարձ՝ 8640.1-հազար դրամ, էներգիայի դիմաց՝ 298.9-հազար դրամ, կապի ծառայությունների դիմաց՝36.0-հազար դրամ, ներքին գործողումների դիմաց՝198.6-հազար դրամ. Գրասենյակային նյութեր և հագուստի դիմաց՝ 219.1 -հազր դրամ, Համակարգչային ծառայությունների դիմաց՝ 129.3-հազր դրամ,տեղեկատվան ծառայությունների դիմաց 24.0-հազար դրամ. Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դիմաց 957.0-հազար դրամ, Վարչական սարքավորումներ 1870.7-հազար դրամ, ձեռք է բերվել նախակրթարանի համար գույք և սարքավորում:

բ/ֆերիկ համայնքի փողոցների արտաքին լուսավորության համակարգի կապիտալ վերանորոգման արդիականացման աշխատանքների համար ծախսվել է 1134-հազար դրամ , 65.0-հազար դրամ տեխնիկական հսկողության համար՝ ընդամենը 1199.0-հազար դրամ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Կատարվել է Ֆերիկ համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի ճշգրտման աշխատանքը, կազմել է համայնքի աղետների ռիսկերի կառավարման պլանը;

Ծանուցագրեր են հանձնվել 2022թվականի ամառային զորակոչային միջոցառումներին մասնակցելու ենթակա զորակոչիկներին; Բնակչության շրջանակներում իրականացվել է թունաքիմիկատներով, թունավորումների կանխարգելման ուղղությամբ իրազեկման աշխատանքներ; Կատարվել են համայնքում հաշվառված զինապարտ քաղաքացիների տվյալների ճշգրտումները համաձայն ՀՀ կառավարության որոշման հավելվածի,զինապարտ քաղաքացիների հաշվառման ձև 1 գրանցամատյանի ձևաչափը փոխարինվել է նորով /ձև4/; Կատարվել է և Արմավիրի մարզային փրկարարական վարչությունն է ներկայացվել համայնքի բնակչության թիվը և պատսպարման համար պիտանի տարածքների մակերեսների վերաբերյալ տեղեկատվությունը, համայնքի բնակչության շրջանում տարվել են բացատրական աշխատանքներ ուղղված բնածին և արհեստածին հրդեհների առաջացման կանխմանը;

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Պետության կողմից տրամադրվել է դրամաշնորհներ համայնքում նախակրթարանի հիմնական կապիտալ վերանորոգման համար և 2022թվականին ընթացքում հանձնվել է շահագործման : Դպրոցի երեխաներին բաժանվել են ամանորյա նվերներ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. միջոցներ եմ ձեռնարկել հաշմանդամների, սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. կատարվել է համայնքային սեփականություն համարվող ոռոգման ցանցերի կապիտալ վերանորոգում և հանձնվել է շահագործման:
2. կատարվել է համայնքի տարածքում ընտանի կենդանիների և թռչունների ամենամյա հաշվառում
3. կազմակերպում է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայություն, համաճարակային միջոցառումներ կենդանիների հիվանդությունների կանխման, և այլ աշխատանքներ,
4. աջակվցել է գյուղ. մթերքների աշխատանքների իրականացմանը, աջակցվել է, որպեսզի բնակիչները իրենց իսկ հավաքած բերքը իրացնեն թե շուկաներում և թե իրացման կետերում և գործարաններում,
5. հաշվառել, և վիճակագրական վարչություն է ներկայացրել կիսամյակային հաշվետվություններ:
6. Համայնքապետարանը խմելու ջրի Էջմիածնի գրասենյակի հետ համատեղ տարվել են աշխատանքներ գյուղը անխափան խմելու ջրով ապահովելու համար:

## ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. կազմակերպել է կենտրոնական ճանապարհների և կից առուների մաքրում,
2. ամենամյա կտրվածքով կազմակերպում է աղբաթափման աշխատանքներ,
3. բարեկարգվել է համայնքի դաշտամիջյան ճանապարհները / հարթեցում, ավազապատում/ և այլ գյուղամիջյան փողոցներ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱ ԲՆԱԳԱՎԱՌ

1. 2022թվականին կատարվել է Ֆերիկ համայնքի փողոցների արտաքին լուսավորության համակարգի կապիտալ վերակառուցում;

Համայնքի ղեկավար Ռուստամ Հասանյան